Հավելված N 1
ՀՀ կառավարության
2024 թ. _____ «____»-ի
N _____ Լ որոշման

ԿԱՐԳ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԱԶԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության գիտական պետական կազմակերպություններում ու բարձրագույն ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ կազմակերպություն) հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման, գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի՝ գիտական կազմակերպությունների և դրանց ու բուհերի կենտրոնների, լաբորատորիաների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների պահպանման ու զարգացման և գիտական հետազոտությունների ու մշակումների իրականացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման, գիտական կադրերի պատրաստման ծրագրերի (այսուհետ՝ ծրագիր) հաստատման ու ֆինանսավորման (այսուհետ՝ բազային ֆինանսավորում), ինչպես նաև բազային ֆինանսավորման մեխանիզմների հարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) ծրագրերը և դրանց ֆինանսական նախահաշիվները՝ որպես բյուջետային ֆինանսավորման հայտի հիմնավորում և դրա անբաժանելի մաս, սահմանված կարգով ներկայացնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության՝ հաջորդ տարվա պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար:

3. Ծրագրում ներգրավված գիտական և ճարտարագիտատեխնիկական աշխատողների պաշտոնային դրույքաչափի նվազագույն չափի հաշվարկի համար որպես բազային աշխատավարձ 2025 թվականի հունվարի 1-ից սահմանել 66 140 դրամ:

4. Յուրաքանչյուր տարակարգի պաշտոնային աշխատավարձի նվազագույն չափը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված աշխատաժամանակի նորմալ տևողությամբ աշխատողների համար, հաշվարկվում է սույն կարգի հավելվածով

նախատեսված աղյուսակով (այսուհետ՝ աղյուսակ) սահմանված գործակցի և բազային աշխատավարձի արտադրյալով:

5. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված աշխատաժամանակի ոչ լրիվ կամ կրճատ տևողությամբ աշխատողների համար որպես պաշտոնային աշխատավարձի նվազագույն չափի հաշվարկի գործակից ընդունել աղյուսակով սահմանված գործակցի նորմավորված արժեքը:

6. 2025 թվականից հետո գործում է աղյուսակի՝ 2025 թվականի համար սահմանված գործակիցը:

2. ԾՐԱԳՐԻ ՀԱՅՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ, ՍՏՈՒԳՈՒՄԸ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄԸ

7. Կազմակերպությունը սույն կարգով մինչև յուրաքանչյուր բյուջետային տարվա առաջին ամսվա երրորդ տասնօրյակ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) առցանց համակարգի (այսուհետ՝ համակարգ) միջոցով ներկայացնում է իր կողմից մշակված ծրագրերի հայտը (այսուհետ՝ հայտ):

8. Հայտի տեսակներն են՝

1) գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագիր, ներառյալ՝ հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման ծրագիր,

2) ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծրագիր, ներառյալ՝ հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման ծրագիր,

3) հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման ծրագիր,

4) գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագիր:

9. Հայտերը ներկայացվում են յուրաքանչյուր տարի՝ մեկից հինգ տարի ժամկետով:

10. Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման և ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծրագրերը պետք է պարունակեն կազմակերպության կառուցվածքի, վարչասպասարկող

անձնակազմի, այլ ծախսերի՝ համապատասխան բացվածքով, ֆինանսավորման ծավալների վերաբերյալ տեղեկություններ:

11. Հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման ծրագրերը պետք է պարունակեն տեղեկություններ արդիականության և ուղղության (ուղղությունների) գիտական կամ գիտատեխնիկական կարևորության, նպատակների և խնդիրների, հիմնարար, կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների՝ կազմակերպության ռազմավարությանը և գիտական կամ գիտակրթական ուղղություններին համապատասխանության, կատարման ժամկետների ու ծավալների, ակնկալվող արդյունքների, ավարտական ձևերի (հաշվետվություն, արտոնագիր, ներդրման հաշվետվություն և այլն) և ֆինանսավորման ծավալների վերաբերյալ: Ծրագրի ընտրության ժամանակ առաջնայնությունը տրվում է տնտեսության զարգացման գերակայություններից բխող նախագծերին:

12. Հայտում կարող է ներառվել նաև նախորդ տարվա հաստատված բյուջեի նկատմամբ լրացուցիչ ֆինանսավորման հիմնավորում:

13. Բազային ֆինանսավորման հայտերը և լրացուցիչ ֆինանսավորման ծավալները քննարկելու համար ձևավորվում է կոմիտեի նախագահին կից աշխատանքային խումբ (այսուհետ՝ աշխատանքային խումբ): Աշխատանքային խմբի թվաքանակը, անհատական կազմը և աշխատակարգը հաստատվում են կոմիտեի նախագահի կողմից:

14. Աշխատանքային խումբը, հիմք ընդունելով հաջորդ տարվա բազային ֆինանսավորման հայտը և նախորդ տարվա հաշվետվությունը, ինչպես նաև ընթացիկ տարվա բազային ֆինանսավորման պայմանագիրը, յուրաքանչյուր հայտի վերաբերյալ կոմիտե է ներկայացնում ֆինանսավորման չափը նույնը թողնելու, լրացուցիչ ֆինանսավորման չափի կամ ֆինանսավորման կրճատման վերաբերյալ առաջարկություն:

15. Ծրագրերը հաստատելու և ֆինանսական ծավալները որոշելու նպատակով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ նախարար) հրամանով ձևավորվում է միջգերատեսչական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

16. Հանձնաժողովի նախագահը, ի պաշտոնե, նախարարն է: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են կոմիտեի, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ու գիտական և գիտատեխնիկական գործունեության մեջ ներգրավված

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների առնվազն մեկական ներկայացուցիչ: Հանձնաժողովի կազմի թվաքանակը և անհատական կազմը հաստատվում են նախարարի կողմից:

17. Կոմիտեն համակարգում է աշխատանքային խմբի աշխատանքները և հայտերի ցանկը ներկայացնում է հանձնաժողով:

18. Հանձնաժողովը, հիմք ընդունելով աշխատանքային խմբի, ինչպես նաև հանձնաժողովի անդամների առաջարկները, քննարկում, արձանագրում և հաստատում է յուրաքանչյուր հայտի ֆինանսական ծավալները, և վերջիններս ներառվում են Հայաստանի Հանրապետության՝ հաջորդ տարվա պետական բյուջեի նախագծում:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

19. Կազմակերպության կատարողականի վրա հիմնված ֆինանսավորում տրամադրելու նպատակով կազմակերպությունում հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացմանն ուղղված յուրաքանչյուր ծրագիր հինգ տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ գնահատվում է ըստ կատարողականի, որի արդյունքում, յուրաքանչյուր ծրագրի արդյունավետությամբ պայմանավորված, կազմակերպությունն ընդգրկվում է հետևյալ կատեգորիաներից որևէ մեկում՝

1) 1-ին կատեգորիա՝ ծրագիրն իրականացնում է գերազանց արդյունավետությամբ, և հաջորդ տարվա բազային ֆինանսավորումը կարող է ավելանալ տվյալ տարվա հաստատված բյուջեի 20 տոկոսի չափով.

2) 2-րդ կատեգորիա՝ ծրագիրն իրականացնում է լավ արդյունավետությամբ, և հաջորդ տարվա բազային ֆինանսավորումը կարող է ավելանալ տվյալ տարվա հաստատված բյուջեի 10 տոկոսի չափով.

3) 3-րդ կատեգորիա՝ ծրագիրն իրականացնում է բավարար արդյունավետությամբ, և հաջորդ տարվա բազային ֆինանսավորումը չի կարող ավելանալ.

4) 4-րդ կատեգորիա՝ ծրագիրն իրականացնում է ոչ բավարար արդյունավետությամբ, և հաջորդ տարվա բազային ֆինանսավորումը կարող է պակասել տվյալ տարվա հաստատված բյուջեի 10 տոկոսի չափով:

20. Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորումն իրականացնելու համար կոմիտեն ձևավորում է մասնագիտական փորձագիտական խորհուրդ (այսուհետ՝ խորհուրդ): Խորհրդի

կազմի թվաքանակը, անհատական կազմը և աշխատակարգը հաստատվում են կոմիտեի նախագահի կողմից:

21. Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման ծավալները որոշելու համար հիմք են հանդիսանում կազմակերպության նախորդ հինգ տարիների հաշվետվությունները: Կոմիտեն անհրաժեշտության դեպքում կազմակերպությունից կարող է պահանջել լրացուցիչ փաստաթղթեր:

22. Գնահատման համար հիմք են հանդիսանալու կազմակերպության գիտաչափական տվյալները, հաշվետվության գիտական փորձաքննության (այսուհետ՝ փորձաքննություն) արդյունքները, կադրային ներուժը, միջազգային համագործակցությունը, ենթակառուցվածքի հագեցվածության աստիճանը, գիտական դրամաշնորհները, ներպետական և միջազգային համագործակցությունն արդյունաբերության հետ, գիտական ուղղությունների համապատասխանությունը գիտության ոլորտի զարգացման ռազմավարական ծրագրի հետ, ինովացիոն գործունեությունը, սոցիալ-տնտեսական ազդեցությունը, գիտակրթական տարածք ինտեգրվելու մակարդակը (ներպետական և միջազգային), ինչպես նաև կազմակերպության գիտական և գիտատեխնիկական գործունեության առանձնահատկություններից բխող այլ չափանիշներ:

23. Գնահատման չափանիշները, յուրաքանչյուր չափանիշի առավելագույն գնահատականը, կատեգորիաների շեմային միավորներն ըստ գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանրյուր բնագավառի և մասնագիտության սահմանվում են կոմիտեի նախագահի հրամանով:

24. Ծրագրի գիտաչափական տվյալների (միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված գիտական հրապարակումներ, հոդվածներ, մենագրություններ և այլն) ընդհանուր գնահատականը չի կարող գերազանցել տվյալ բնագավառի առավելագույն գնահատականի 40 տոկոսը և չի կարող փոքր լինել տվյալ բնագավառի առավելագույն գնահատականի 20 տոկոսից:

25. Հաշվետվությունների փորձաքննության ընդհանուր գնահատականը կազմում է տվյալ բնագավառի առավելագույն գնահատականի 40 տոկոսը:

26. Եթե կազմակերպությունում առկա են մեկից ավելի հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացվող ծրագրեր, ապա

կազմակերպությունը դասակարգվում է տարբեր կատեգորիաների՝ ըստ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների:

3. ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

27. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքի ընդունումից և վերջինիս կատարումն ապահովող միջոցառումների մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման հաստատումից հետո գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման համար կոմիտեն համապատասխան կազմակերպության հետ կնքում է բազային ֆինանսավորման համապատասխան ծրագրի պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

28. Պայմանագրում, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջներից, նշվում են համապատասխան ծրագրի անվանումը, իրականացման ժամկետները, ֆինանսավորման չափը, պայմանները և ժամկետները, ինչպես նաև իրականացվող ծրագրի ընթացիկ (տարեկան) և ավարտված ծրագրի ամփոփիչ հաշվետվությունների ձևերը, դրանց ներկայացման ժամկետները և ծրագրի առանձնահատկությունից բխող այլ կետեր:

29. Ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման և ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորում հատկացվում է պայմանագրային հիմունքներով որպես օգտագործման հանձնված գույքի պահպանման ծախս:

30. Կազմակերպությունը պայմանագրում նշված ժամկետներում համակարգի միջոցով կոմիտե է ներկայացնում ծրագրի իրականացման ընթացիկ (տարեկան) և ամփոփիչ հաշվետվություններ:

31. Կոմիտեն հիմնարար, կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների ծրագրերի իրականացման ընթացիկ (տարեկան) կամ ամփոփիչ հաշվետվությունները տրամադրում է խորհրդին: Խորհուրդը քննարկում է հաշվետվությունները և կոմիտե է ներկայացնում եզրակացություն՝ հիմնարար, կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների ծրագրերի իրականացման

ընթացիկ (տարեկան) կամ ամփոփիչ հաշվետվությունների վերաբերյալ, որը հիմք է հանդիսանում իրականացվող հիմնարար, կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների ծրագրերի հետագա ֆինանսավորումը շարունակելու կամ դադարեցնելու, լրացուցիչ ֆինանսավորման չափի կամ ֆինանսավորման կրճատման ծավալները որոշելու համար:

Հավելված
Գիտական և գիտատեխնիկական գործունեության
բազային ֆինանսավորման կարգի

ԱՂՅՈՒՍԱԿ
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Պաշտոն		Գործակից
		2025 թ.
Գիտական պաշտոններ		
	Կրտսեր գիտական աշխատող	3.18
	Գիտական աշխատող	4.17
	Ավագ գիտական աշխատող	5.19
	Առաջատար գիտական աշխատող	6.71
	Գլխավոր գիտական աշխատող	8.36
	Պատվավոր առաջատար գիտաշխատող	5.19
	Պատվավոր գլխավոր գիտաշխատող	6.71
	Գիտական խմբի ղեկավար	6.2
	Գիտական ստորաբաժանման ղեկավար (լաբորատորիայի վարիչ, բաժնի վարիչ, սեկտորի վարիչ, բաժանմունքի ղեկավար/վարիչ, կենտրոնի ղեկավար և այլն)	7.21
Ճարտարագիտատեխնիկական պաշտոններ		
	Լաբորանտ կամ ճարտարագետ	2.09
	Ավագ լաբորանտ կամ ավագ ճարտարագետ	2.71

Հավելված N 2
ՀՀ կառավարության
2024 թ. _____«____»-ի
N _____ Լ որոշման

ԿԱՐԳ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ – ԾՐԱԳՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքում տրված գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային ֆինանսավորման մեխանիզմը, ինչպես նաև գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային ծրագրերի (այսուհետ՝ նպատակային ծրագիր) ներկայացման, մրցութային կարգով դրանց ընտրության և ֆինանսավորման գործընթացները:

2. Նպատակային ծրագիրը համապետական նշանակության ռազմավարությունների իրականացման շրջանակներում կատարվող գիտահետազոտական համալիր ծրագիր է, որը նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետության տնտեսական, բնապահպանական, առողջապահական, սոցիալական, գիտատեխնիկական և գիտամշակութային հիմնախնդիրների արդյունավետ լուծմանը, հասարակության կենսական պահանջների բավարարմանը, մրցունակ գիտատար արտադրանքի ստեղծմանը:

2. ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

3. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի մարմինները (այսուհետ՝ պետական մարմիններ) սույն կարգով մինչև յուրաքանչյուր տարվա առաջին ամսվա երրորդ տասնօրյակ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) կողմից սահմանված ձևաչափով ներկայացնում են իրենց ոլորտներում առկա ռազմավարական խնդիրների լուծմանը, ինչպես նաև իրենց գործունեության արդյունավետ կազմակերպմանը միտված նպատակային ծրագրերի անվանումներ:

4. Միևնույն պետական մարմինը մեկից ավելի նպատակային ծրագրի անվանում ներկայացնելու դեպքում պետք է դրանք շարադրի ըստ առաջնահերթության:

5. Ստացված նպատակային ծրագրերի անվանումները քննարկելու, խմբագրելու, խմբավորելու, նոր անվանումներ ավելացնելու, պակասեցնելու և նպատակային ծրագրերի

անվանումների ցանկը (այսուհետ՝ ցանկ) ձևավորելու նպատակով կոմիտեն ստեղծում է աշխատանքային խմբեր (այսուհետ՝ աշխատանքային խմբեր)՝ ըստ առանձին ոլորտների:

6. Աշխատանքային խմբերում ներառվում են ոլորտի առաջատար գիտնականներ և պետական մարմինների ներկայացուցիչներ:

7. Կոմիտեն ցանկը համաձայնեցնում է պետական մարմինների հետ և ցանկում ներառված ծրագրերի անվանումների ուղղությամբ կազմակերպում է նպատակային-ծրագրային ֆինանսավորման մրցույթ (այսուհետ՝ մրցույթ):

8. Մրցույթի մասին հայտարարությունը հրապարակվում է Կոմիտեի ինտերնետային կայքում: Մրցույթի հայտարարությունը պարունակում է համառոտ տեղեկություններ մրցույթի անցկացման նպատակի, հրավեր ստանալու և մրցույթին մասնակցելու պայմանների մասին:

9. Մրցույթի հրավերը պետք է պարունակի՝

1) մրցութային ծրագրի անվանումը.
2) մրցույթի անցկացման նպատակը.
3) մրցույթի իրականացման ժամկետները.
4) ակնկալվող արդյունքների պահանջները.
5) հայտի ձևը և դրա լրացման և ներկայացման ընթացակարգը.
6) հայտի ֆինանսական նախահաշվի ձևը.

10. Մրցույթին մասնակցում են գիտական կազմակերպություններն ու բուհերը (այսուհետ՝ կազմակերպություն)՝ ներկայացնելով նպատակային ծրագրի հայտ (այսուհետ՝ հայտ):

11. Հայտը պետք է պարունակի՝

1) ընդհանուր տեղեկություններ ռազմավարական հիմնախնդրի, դրա արդիականության, կարևորության և նպատակային ծրագրի իրականացմամբ լուծման հնարավորությունների մասին.

2) տեղեկություններ նպատակային ծրագրի հիմնական թիրախների, իրականացման ժամկետների, նախադրյալների, ֆինանսական ծավալների, ակնկալվող արդյունքների, ավարտական ձևերի (գիտական հրապարակումներ, փորձնական նմուշներ, արտոնագրեր, ներդրման վկայագրեր, հաշվետվություններ և այլն), պետական մարմինների կողմից դրանց կիրառության և պետության կարիքների բավարարմանն ուղղված լինելու մասին:

12. Եթե մրցույթին ներկայացված հայտը ներառված չէ ցանկում, ապա հայտի հետ պետք է ներկայացվի նաև առնվազն մեկ պետական մարմնի պաշտոնական գրություն իրենց

ոլորտներում առկա ռազմավարական խնդիրների լուծմանը, ինչպես նաև իրենց գործունեության արդյունավետ կազմակերպմանը միտված նպատակային հայտի նպատակահարմարության վերաբերյալ:

13. Ներկայացված հայտերի գիտական փորձաքննության նպատակով կոմիտեն ձևավորում է մասնագիտական փորձագիտական խորհուրդ (այսուհետ՝ խորհուրդ): Խորհրդի կազմի թվաքանակը, անհատական կազմը և աշխատակարգը հաստատվում են կոմիտեի նախագահի կողմից:

14. Խորհուրդը ուսումնասիրում և գնահատում է նպատակային ծրագրերի հայտերը, դրանց գիտական հենքը, համապատասխանությունը պետական մարմինների կողմից դրանց կիրառությանը և պետության կարիքների բավարարմանը, ծրագրերի իրականացման նախադրյալները (կադրային կազմ, նյութատեխնիկական բազա), ավարտական ձևերն ու տեխնիկատնտեսական ցուցանիշները և ըստ ֆինանսավորման և իրականացման անհրաժեշտության՝ ձևավորում է վարկանիշային ցանկ՝ գնահատականների նվազման կարգով:

15. Խորհրդի կողմից ներկայացված առաջարկության և ձևավորված վարկանիշային ցանկի հիման վրա Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատվում է նպատակային ծրագրերի ցանկը, որը կոմիտեն ընդգրկում է Հայաստանի Հանրապետության՝ հաջորդ տարվա պետական բյուջեի նախագծում:

3. ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԾՐԱԳՐԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

16. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքի և վերջինիս կատարումն ապահովող միջոցառումների մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունումից հետո կոմիտեն նպատակային ծրագիր իրականացնող կազմակերպությունների հետ կնքում է պայմանագրեր (այսուհետ՝ պայմանագիր):

17. Պայմանագրում, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջներից, նշվում են համապատասխան նպատակային ծրագրի անվանումը, իրականացնող կազմակերպության անվանումը, իրականացման ժամկետները,

ֆինանսավորման չափը, վճարման պայմանները և ժամկետները, ինչպես նաև ընթացիկ (տարեկան) ու ամփոփիչ հաշվետվությունների ներկայացման ժամկետները:

18. Նպատակային ծրագիրն իրականացնող կազմակերպությունը պայմանագրում նշված ժամկետներում կոմիտեի կողմից սահմանված ընթացակարգով ներկայացնում է նպատակային ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվություն:

19. Կոմիտեն ընթացիկ (տարեկան) ու ամփոփիչ հաշվետվությունները տրամադրում է խորհրդի քննարկմանը, և վերջինս տալիս է եզրակացություն՝ նպատակային ծրագրերի իրականացման ընթացիկ (տարեկան) և ամփոփիչ հաշվետվությունների վերաբերյալ, որը հիմք է հանդիսանում իրականացվող նպատակային ծրագրերի հետագա ֆինանսավորումը շարունակելու կամ դադարեցնելու համար, իսկ ավարտվող նպատակային ծարագրերի պարագայում՝ ամփոփիչ հաշվետվությունը ընդունելու կամ մերժելու համար:

20. Իրականացվող նպատակային ծրագրերի ֆինանսավորումը շարունակվում է խորհրդի կողմից ընթացիկ (տարեկան) հաշվետվությունների վերաբերյալ դրական եզրակացության հիման վրա: Իրականացվող նպատակային ծրագրի ընթացիկ հաշվետվության վերաբերյալ խորհրդի բացասական եզրակացության հիման վրա նպատակային ծրագրի ֆինանսավորումը դադարեցվում է:

Հավելված N 3
ՀՀ կառավարության
2024 թ. _____ «____»-ի
N _____ որոշման

Կ Ա Ր Գ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքով սահմանված գիտական և գիտատեխնիկական գործունեության գիտական դրամաշնորհային ֆինանսավորման շրջանակներում գիտական հետազոտությունների կամ գիտատեխնիկական մշակումների հանգեցնող, գիտնականների և հետազոտական խմբերի (կոլեկտիվների) նախաձեռնությամբ հետազոտական նախագծերի (այսուհետ՝ հետազոտական նախագիծ) ներկայացման, մրցութային կարգով դրանց ընտրության և ֆինանսավորման հետ առնչվող հարաբերությունները:

2. Հետազոտական նախագծերի ֆինանսավորման նպատակով Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե) կազմակերպում է մրցույթ (այսուհետ՝ մրցույթ)՝ ըստ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների:

3. Մրցույթի մասին հայտարարությունը հրապարակվում է կոմիտեի ինտերնետային կայքում: Մրցույթի հայտարարությունը պարունակում է համառոտ տեղեկություններ մրցույթի անցկացման նպատակի, հրավեր ստանալու և մրցույթին մասնակցելու պայմանների մասին:

4. Մրցույթի հրավերը պետք է պարունակի՝

1) մրցութային ծրագրի անվանումը.

2) մրցույթի անցկացման նպատակը.

3) մրցույթի իրականացման ժամկետները.

4) հետազոտական խմբին (կոլեկտիվի), ղեկավարին և անդամներին ներկայացվող որակավորման պահանջները.

5) հետազոտական նախագիծն իրականացնելու համար գիտական կազմակերպությանը կամ բարձրագույն ուսումնական հաստատությանը (այսուհետ՝ կազմակերպություն) ներկայացվող պահանջները.

6) ակնկալվող արդյունքների պահանջները.

7) հայտի ձևը և դրա լրացման և ներկայացման (նաև թղթային) ընթացակարգը, ինչպես նաև տեղեկություններ՝

ա. հայտով ներկայացվող հետազոտական նախագծի նպատակի հիմնավորման, խնդիրների, դրանց լուծման նախադրյալների և ուղիների, հետազոտական նախագծի կատարման ժամկետների, դրա կատարման նպատակով առկա և ձեռք բերվող սարքավորումների, նյութերի, միջոցների, նախատեսվող արշավախմբերի, գիտագործնական միջոցառումների անհրաժեշտության ու դրանց համար անհրաժեշտ գումարների մասին,

բ. կազմակերպության կարողությունների վերաբերյալ, ներառյալ՝ համապատասխան լաբորատորիայի, սարքերի, սարքավորումների, միջոցների, նյութերի և այլնի մասին.

8) հայտի ֆինանսական նախահաշվի ձևը.

9) հայտերի ընտրության, գիտական փորձաքննության (այսուհետ՝ փորձաքննություն) ձևը.

10) մրցույթի արդյունքների հրապարակման հավանական ժամկետը.

11) գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ բնագավառի առանձնահատկություններից բխող այլ տեղեկատվություն:

5. Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի նախագծում գիտական և գիտատեխնիկական գործունեության գիտական դրամաշնորհային ֆինանսավորման համար հատկացումները՝ որպես դրամաշնորհներ, նախատեսվում են ուղղել մրցութային կարգով ընտրված ու կոմիտեի կողմից հաստատված հետազոտական նախագծերի ֆինանսավորմանը:

2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ ԵՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԴՐԱՆՑ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

6. Մրցույթին մասնակցելու նպատակով գիտնականների և հետազոտական խմբերի (կոլեկտիվների) կողմից հետազոտական նախագծի հայտը (այսուհետ՝ հայտ) ներկայացվում է կոմիտեի առցանց համակարգի (այսուհետ՝ համակարգ) միջոցով՝ ըստ մրցույթի հրավերով սահմանված կարգի:

7. Հետազոտական նախագծերի իրականացման նպատակահարմարության և ֆինանսական ծավալների վերաբերյալ անհրաժեշտ առաջարկություններ ստանալու նպատակով՝ կոմիտեն ձևավորում է հետազոտական նախագծերի հայտերի երաշխավորման ու հաշվետվությունների ընդունման հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

8. Կոմիտեն, հանձնաժողովի հետ համատեղ, կազմակերպում է հայտերի փորձաքննություն՝ ըստ մրցույթի հրավերով սահմանված կարգի:

9. Փորձաքննության ժամանակ գնահատվում է հայտը՝ գիտական և գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, գիտնականների և հետազոտական խմբի (կոլեկտիվի) ձեռքբերումները տվյալ բնագավառում և նրանց մասնագիտական որակավորման համապատասխանությունը հետազոտական նախագիծ իրականացնելու համար, երիտասարդ (մինչև 35 տարեկան) մասնագետների ընդգրկվածությունը, հետազոտական նախագծի իրականացման նախադրյալները, փուլերը և ժամկետները, պահանջվող ֆինանսական միջոցների հիմնավորվածությունը և մրցույթի առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

10. Փորձաքննության արդյունքների հիման վրա կոմիտեն գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր մասնագիտության համար ձևավորում է հայտերի վարկանիշային ցանկ՝ փորձաքննության վերջնական գնահատականների նվազման կարգով:

11. Հանձնաժողովը հաստատում է հայտերի վարկանիշային ցանկը և կոմիտե է ներկայացնում հետազոտական նախագծի ֆինանսավորման նպատակահարմարության և ծավալների մասին առաջարկություն:

12. Կոմիտեն, ելնելով Հայաստանի Հանրապետության՝ տվյալ տարվա պետական բյուջեով գիտական դրամաշնորհային ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափից, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հաստատմանն է ներկայացնում հետազոտական նախագծերի ցանկը:

13. Կոմիտեն հայտի ղեկավարին է տրամադրում նրա հայտի փորձաքննության վերջնական գնահատականն ու գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ մասնագիտության շեմային գնահատականը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

14. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքվում են պայմանագրեր՝

1) կոմիտեի, կազմակերպության և սույն կարգի 13-րդ կետում նշված ցանկում ընդգրկված հետազոտական նախագծի ղեկավարի միջև,

2) հետազոտական նախագծի ղեկավարի և կատարողների միջև:

15. Պայմանագրերում, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջներից, նշվում են նաև համապատասխան հետազոտական նախագծի անվանումը, ղեկավարի անունը, ազգանունը, կազմակերպության անվանումը, որտեղ պետք է իրականացվի հետազոտական նախագիծը, վերջինիս իրականացման ժամկետներն ու պայմանները, ֆինանսավորման չափը, հաշվետվության ներկայացման ժամկետները, ինչպես նաև մրցույթի առանձնահատկություններից բխող այլ կետեր:

4. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ, ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

16. Հետազոտական նախագծի իրականացման մասին կազմվում են ընթացիկ (տարեկան) և ամփոփիչ հաշվետվություններ: Վերջիններս գնահատվում են՝ հաշվի առնելով արդյունքների նորույթը և դրանց նշանակությունը, հրապարակումների կամ այլ վերջնական արդյունքների գիտական մակարդակը, դրանցում կատարողների ներգրավվածության աստիճանը:

17. Գիտական թեմայի ընթացիկ (տարեկան) հաշվետվությունները ներկայացվում են իրականացման ժամկետի սկզբից հաշված յուրաքանչյուր 12-րդ ամսվա վերջին աշխատանքային օրը, եթե մրցույթի հրավերի փաթեթով այլ պայմաններ նախատեսված չեն:

18. Կոմիտեն ընթացիկ (տարեկան) կամ ամփոփիչ հաշվետվությունները ներկայացնում է հանձնաժողով: Հանձնաժողովը քննարկում է ընթացիկ (տարեկան) կամ ամփոփիչ հաշվետվությունները և կոմիտե է ներկայացնում հետազոտական նախագծի հետագա ֆինանսավորման նպատակահարմարության (ընթացիկ հաշվետվություն) կամ ընդունման (ամփոփիչ հաշվետվություն) մասին առաջարկություն:

19. Հանձնաժողովի առաջարկության հիման վրա կոմիտեն որոշում է ընդունում հետազոտական նախագծի հետագա ֆինանսավորման կամ դրա դադարեցման մասին: